



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԹԻՒ 3

ՊՈՀՏԱՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐքԱՅԻՆ

# Ա.ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.Զ.Պ.Ա.ՅԻՒՆ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ՔՈՂՈՎՈՅ

ՔԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍ ԱՌԱՋԻՆ

21 օգոստոս 1874



## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻԿԵՆՏՈՒՏԵԱՆ

1874

# ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊՐԻՎԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

ԹԱՅՈՒՄ 1874 ԱՄԵՐ

ՆԻՍ Դ.

24 ՅՈՒՆԻՍ 1874

ՆԱԽԱԳԱՀ — ՍՐԲՈՂԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ  
ԱՏԵՆԱՊԵՏ — ՌՈՒՍԻՆԵԱՆ Էֆ. (առժամանակեաց կարգեալ)

## ԿԱՐԴ ԽՆԴՐԱՑ

- Ընտրութիւն Դիւանի Ընդհանուր ժողովոյ :
- Ընտրութիւն Աղդ . Վարչութեան կրօն . ժողովոյ :
- Ընտրութիւն պակսած անդամոց Քաղ . ժողովոյ :
- Վաւերացում նախորդ Ատենազրութեանց :
- Աղդ . Սահմանադրութեան վարչութեալ տրամադրութիւնք :
- Աղթամարայ Կաթուղիկոսական խնդիր :

Ատենապետ՝ Աղաբէկեան Սարդիս էֆ. ի բացակայութեան պարճառաւ ժողովոյն հըրաւիրանաց համեմատ Ռուսինեան էֆ. առժամանակեայ կերպիւ Ատենապետութեան պաշտօնին կը կոչուի եւ կը բանայ ատեանը ժամը 7 ½ ին ՚ի ներկայութեան 57 երեսփոխանաց, մեծամասնութեան ժողովոյ, որոց թիւն աւելնալով վերջապէս 60ի հասաւ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԴԻՒԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ.

ԻՓԵԿՃԵԱՆ Հ. էֆ. — Ընդհանուր ժողովոյ դիւանին ընտրութիւնն առաջնութիւնը քուէի դրուելով ընդունուեցաւ, եւ հաւանականարար ընտրութիւնը պիտի կատարուի, բայց բաւական թուով հրաժարեալներ կան, նոյնպէս յաջորդաբար երեք անգամի բացակայութիւններ կան, պէտք է որ անոնք նկատողութեան առնուին, կամ ընդունուին եւ կամ մերժուին, որպէսզի զիտնանք թէ զո՞վ պիտի ընտրենք դիւանի անդամ, վասն զի

քուէարկութեամբ որոշուի այն, ապօրինաւորութիւն գործած չըլլալու համար:

Ատենապետ էֆ. քուէի կը դնէ Խիէկնեան էֆ.ի առաջարկութիւնը, եւ ժողովը ընդհանուր հաւանութեամբ կընդունի եւ; կը հաստատէ դիւանին ընտրութեան առաջնութիւնը:

ՄԱԶԱՄԵԱՆ Յ. էֆ. — Դիւանին ընտրութեան առաջնութիւնը քուէի դրուելով ընդունուեցաւ, եւ հաւանականարար ընտրութիւնը պիտի կատարուի, բայց բաւական թուով հրաժարեալներ կան, նոյնպէս յաջորդաբար երեք անգամի բացակայութիւններ կան, պէտք է որ անոնք նկատողութեան առնուին, կամ ընդունուին եւ կամ մերժուին, որպէսզի զիտնանք թէ զո՞վ պիտի ընտրենք դիւանի անդամ, վասն զի

անոնց մէջ կան այսպիսիներ՝ որ զիւանին անդամակցութեան արժանիք ունին :

Ատենադպիր էֆ . կը կարդայ հրաժարելոց եւ Յ անգամ բացակայից անունները , որոց թիւը 18 է , եւ կը յայտնէ թէ ասոնց Դը զրաւոր հրաժարական տուած են , բայց ձողովք դեռ ընդունած չէ , իսկ 11ը Յ անգամ յաջորդարար բացակայութիւն ունեցողներն են , որոնց երկրորդ բացակայութեան կանոնաւոր ազդագիրը զրկուած չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ · — Խօսքը ղիւանին ընտրութեան վրայ է , Յ Ատենապետ եւ Յ Ատենապիր պիտի ընտրութին , ըսել է Դիւանին ան-

Եֆ . կըսէ թէ փորձով տեսնուած է որ դժուա-  
րութիւններ կան Դիւանին 6 անդամները միան-  
դամայն ընտրելուն մէջ , ուստի կառաջարկէ  
զատ զատ ընտրել , ասի Դիւանին կարծիքն է ,  
Ժագովոյն կը միայ այս ընտրութեան ձեւն որոշել :

ՊԵԿԵԱՆ Թ. · ԵՖ. — Փորձով տեսանք որ  
ստուգիւ Դիւանին անդամոց մէկէն ընտրու-  
թիւնը շփոթութիւն կուտայ , միեւնոյն անձը  
Ա. Եւ Բ. Առենապետ կամ Առենադպիր կրնայ  
ընալուիլ եւ այս կերպով կը գժուարանայ ընտ-  
րութիւնը , իսկ մի առ մի ընտրութիւնը զիւրին  
կը լինի : Գալով թէ հրաժարեալ համարուող  
Նրեսփոխանաց համար քուէ պիտի կարենա՞նք  
տալ թէ ոչ . այս մասին կըսեմ թէ ձողովը  
Դիւանին ընտրութեան քուէ արկութեամբն այդ  
խնդիրն ալ կրնայ որոշած ըլլալ . եթէ քուէ  
ընդունին Նրեսփոխանութենէն հրաժարեալ  
չպիտի համարուին , եւ եթէ քուէ չընդունին ,  
հրաժարեալ պիտի համարուին ,

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Եֆ. — Հրաժարելոց  
մասին իմ կարծիքս սա է թէ քանի որ Արբաղան  
Պատրիարքը նոր ընտրուեցաւ . ո՞րքան հրա-  
ժարեալ Երեսփոխան կայ , Արբաղան Հայրը մէջ  
մէկ անդամ դանոնք հրուիրէ Փողովին , եթէ  
անձամբ չպատասխանեն , այն առեն հրաժարեալ  
համարուին .

Ինթիեձեսն Կ. Եֆ. — Հրաժարելոց խընդուռը Պիտիան առաջ բերաւ ու ետ ձգեց , ինչու , չեմ գիտեր : Անոնք որ դրաւոր հրաժեշտ տուած են , հրաժարեալ պիտի ճանչցուի՞ն թէ ոչ , պէտք է որ ձողովը քուէով որոշէ .

միւսներուն համար Արքազան Հայրն Եթէ մէյմէկ  
անդամ հրաւիրել յանձն տռնու , ըսելիք չունիմ :  
Իսկ Պէկեան էֆ ՚ի խօսքին դառնալով , որ կըսէ  
թէ Ժողովն եթէ իր քուէ արկութեամբ Դիւան-  
ին անդամ ընտրէ հրաժարեալներէն մէկը ,  
ոնոր հրաժարականը չընդունած կը համարուի .  
Ը հարցնեմ թէ ոչ ապաքէն աւելորդ է անոնց  
նորութեան համար քուէ տալ երբ յայտնի չէ  
ու է պիտի ընդունի՞ն մը , եւ եթէ չպիտի ընդու-  
ին թերեւս , այն ատեն դործը երկարել հարկ  
ըլլայ : Աւստի ևս կառաջարկեմ որ նախ հըրա-  
արականներն քուէի դրուին եւ որոշուին եւ  
տոյ Դիւանին ընտրութեան համար քուէար-  
ութիւն ըլլայ :

ՊԵԿԵԱՆ Թ . Էֆ . — Քուէարկութիւնն  
կամ է , չենք կրնար ետ ձգել , կանխառ պէտք  
ո այդ խնդիրն որոշել :

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. Եֆ. — 7 հրաժարական  
այ ներկայացած առանց ընդունելու կամ մեր-  
ելու չենք կրնար Դիւանի ընտրութիւն կատա-  
լ, վասն զի եթէ հրաժարականնին չպիտի ըն-  
ունուի, այն ատեն իրրեւ Երևսփոխան հարկաւ  
իւանի անդամ ալ կրնան ընտրուիլ: Կարծիք  
ալ յայտնող եղաւ թէ քուէները կրնան տա-  
սծիլ հրաժարելոց վրայ ալ, եւ եթէ մեծագոյն  
սուզ ընտրուած ըլլան, հրաժարականնին չըն-  
ունուած կը համարուի, բայց չենք դիտեր թէ  
չու հրաժարեր են եւ թէ հրաժարականնին  
ո պիտի տոնոմւն կամ ոչ: Ասկէ զատ Ժողո-

արօնակալքատեր ուստի դէմ է որ Դիւանի  
նոդամակցութեան կոչէ հրաժարեալ մը եւ նա  
յրժէ , ուստի նախ հրաժարականաց խնդիրը  
ւծելու եւ յետոյ Դիւանին ընտրութիւնը կա-  
պրելու է : Քրիստոսատուր էֆ . կառաջարկէ որ  
աժարեալք Սրբազնն Պատրիարքէն հրաւիր-  
ին , եւ եթէ չգան , հրաժարականին ընդուն-  
ի : Այդ հրաւէրն որ Դիւանին կողմէն պիտի  
լայ : Յ անգամ իրարու վրայ բացակայ դըտ-  
ւողներուն համար է , իսկ գրով հրաժարողաց  
ումար զայդ չեմ ընդունիր , վասն զի մինչեւ  
մաս աստանին սահմանին մը եռած էլ էլ սահ-

ոռ ալ չկայ այդպիսի նոր բան մը հաստատելու :  
կառաջարկեմ որ բացակայ եղողները միայն  
աւիրութիւն Սրբազն Պատրիարքէն , իսկ զրով  
աժարողներուն հրաժարագրերը կարդացուելով  
սխ հասկցութիւն թէ ինչ տեսակ հոաժարական

են, պատճառաբանութեամբ թէ պարզ հրաժարական են, եւ յետոյ անոնց ընդունելութիւնը կամ մերժումը սրոշուի ժողովէն:

ԵՌԵՍՈՒԹԵԱՆ Տ. ԷՅ. — 7 հրաժարելոց  
մէջէն կին հրաժարականներն արդէն ծողովոյ  
67 րդ նստին ներկայացած են Առենապետ էֆ. ի  
կողմէն եւ ատենագրութեան մէջ ալ անուննին  
նշանակուած, բայց որոշում մը եղած չէ, որք  
են :

Ասլանեան Ստեփան վաշա  
Տառեան Առաքել Պէյ  
Գարակէօղեան Կարապետ է ի  
Փանոսեան Կարապետ

իսկ մնացեալ Յին հրաժարականները՝ որ առաջններէն ետքը ելած են, տակաւին ժողովոյն հաղորդուած չեն, որք են

Աղամբանեան Յովսէփի էֆ.

Digitized by srujanika@gmail.com

իբր Ատենադպիր սոյն տեղեկութիւնը տալէ  
ետեւ, իրրեւ Երեսփոսան կը կրկնեմ Քրիս-  
տոսառուր էֆ. ի առաջարկութիւնը, թէ ամե-  
նուն միօրինակ հրաւէր գրուի Արքաղան Պատ-  
րիարքի կողմէն, եւ եթէ չպատասխանեն հրա-  
ժարականնին ընդունուած համարուի: Այս ա-  
ռաջարկութիւնը կը կրկնեմ չէ թէ ուրիշ նպա-  
տակի մը համար, այլ թերեւս միջոց մը ըլլայ  
հեռու մնացողները միացնելու համար, ասի  
խաղաղասիրական միջոց մ'է միայն:

Ե՞սՔՍԵՐՃԵԱՆ Տ. Էֆ. — Դիւանի ընտրութիւնն որոշուեցաւ առաջին խնդիր ընել, պէտք է անմիջապէս այս ընտրութիւնը կատարուի, բայց Դիւանին կողմէն խնդիր մը երեւան ելաւ, այն է թէ 3 Ատենապետ եւ 3 Ատենապիր պիտի ընտրուին, ասոնք զատ զա՞տ թէ ամենքը միանգամայն ընտրել պէտք է : Ահա այս կէտին վրայ է խնդիրը, շուտով այս կէտը պէտք է որոշել եւ անցնիլ ընտրութեան, արգէն քուէթ պիթերը ձեռքերնիս է . ընտրութեան ձեւն որոսնգէ՛ք որ քուենիս տանք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Հրաժարականաց խընդիրը Դիւանին ընտրութեան հետ կապակցութիւն ունի, անոր համար պէտք եղաւ որոշել :

ԿՈՍՏԱՆԵԱՆ Յ. Ի. Ք. — Եւ ալ ԿՐ ԿՐՐԿ-

Եթէ Տեղամաք է՞ֆ .ի առաջարկութիւնը , որով  
ետեւ եթէ հրաժարելոց նաևսկ գրուելու  
սուաջարկութիւնն ընդունուի , հարկ կը լինի  
իիւանին ընարութիւնն այսօր ետ ձգել եւ  
անոնց պատասխանին սպասել :

Ուրիշ երեսվոյսաններ եւս կը ձայնակցին միւանի ընտրութեան անմիջապէս կատարուիլն ուռաջարկող Երեսվոյսանաց :

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. ԵՅ. — Կոստան է Գ. բարեկամ հրաժարելոց պատասխանին եթէ սպասուի անոնց կամքէն կախում պիտի ունենայ Դիւանին ընարութիւնը, սակայն ես այնպէս չեմ դատեր լինչեւ ցարդ հրաժարական պատահած առևնդողով քուէի դնելով երբեմն կընդունէր եւ երբեմն կը մերժէր, մերժուած հրաժարականին տէրը կամ այն է որ ետ կառնէր եւ կամ կրկին հրաժարական տուածին ոլէս կընդունուէր

Հրաժարականները խնդիր չընելով Դիւանի ընտրութիւնը ընելն օրինաւորութենէ շատ հեռի է այս հրաժարականաց մէջ պատճառաբանեալներկան, եթէ Ժողովը մերժէ, կորոշուի եւ կը լմնայ: Եռասուֆեան էֆ. ըստ թէ անոնց կը Ժողովին ներկայացուած է, բայց քուէի չզրուած, Ատենապետ էֆ. կը ներկայացնեմ ըստ լով հրաժարականները բերեր կարդացեր է, բայց ընդունուած ըլլալուն կամ չըլլալուն վրայ որոշակի բան մը յայտնուած չէ Ատենազրութեամէջ: Եթէ Դիւանը դիւրութիւն ունի թ'ո Ատենազրութենէն այն կի՞ն հրաժարականաց օրինակները ներկայացնէ Ժողովին յիշողութիւն զարթուցանելու համար, մնացած Յին ալ չըրաժարականները թ'ող կարդայ, Ժողովն ալ իւ վերջնական կամքը թ'ող յայտնէ, եւ ասիկաքանի մը բոպէի գործ է, շուտով կը լմնայ:

Այս միջոցին Ատենապետ է Փ. անմանելու  
որ Դիւանին ընտրութիւնն անցապաղ կատարել  
լու մասին Երեսփոխանաց մէջ հետզհետէ ձայ  
ները կը շատնան, հրաժարականաց խնդիրը ոոյ  
ընտրութեան հետ չկասկելու եւ ետքի ձգելո  
կետին վրայ քուէով Ժողովին կամքը հարցնե  
կը պարտաւորի :

ԷՆՍԵՐՁԵԱՆ Տ. ԷՅ. — Դիւանին ընտրութեան հետ առանց ուրիշ խնդիր կապելու քառէ տուինը եւ առաջին խնդիրը ըստինք ըն

արութիւնը . քանի որ անդամ մը քուէարկուեցաւ , ա'լ ի՞նչ հարկ կայ սրոշուած խնդրոյ մը գրայ դառնալ եւ նորէն ֆողովին կամքը հարցնել :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Ոմանը կարծեն թէ Զ անդամ քուէարկութիւնը ընկլու հարկ չկայ . բայց երբ Դիւանը կը տեսնէ թէ Զ կարծիք կայ , եւ բաւական թուով պաշտպանողներ կան նոյն երկու կարծիքները , բնական է որ ձողովին կամքը քննէ քուէով . ի՞նչ լիսա կայ երկու անդամ քուէ տալէն :

Զայս ըսելով Ատենապետ էֆ. քուէի կը դնէ նոյն երկու կարծիքը , եւ ձողովը 10 քուէի գէմ 27 քուէով կորոշէ հրաժարականաց խնդիրն ետքի ձգել եւ անմիջապէս Դիւանի ընտրութեան քուէարկութիւնը կատարել ,

Ատենապետ էֆ. յայտարարելով թէ Դիւանի ընտրութեան քուէարկութեան եղանակին վրայ եւս տարրեր կարծիքներ կան , կը հրաւիրէ զօղողով որ այս տարրեր եղանակներուն մէկն որոշէ իւր քուէովը , եւ կը յաւելու .

« Դիւանը 6 անդամ պիտի ունենայ , 3 և Ատենապետ եւ 3 Ատենադպիր , ասոնց ընտրութիւնը կրնայ ըլլալ որ ամենը մէկնեղ և մէկ քուէարկութեամբ կատարուի , բայց այս եղանակին մէջ գժուարութիւններ կան ըսուեցաւ , անոր համար զատ զատ ընտրելու և ձեւը կառաջարկուի , բայց այս ձեւին մէջ ալ երկու տարրեր ձիւղեր կան , մէկն է իւրաքանչիւրը դատ զատ ընտրել , այսինքն նախ և Ատենապետները եւ յետոյ Ատենադպիրները և հետզետէ . իսկ միւսն է Ա. կարդի Ատենապետն ու Ատենադպիրը զատ , Բ. կարդինը և դատ եւ Գ. կարդինը զատ ընտրել , 3 ան « գամ քուէարկութիւն կատարելով : Առոնց և որը պիտի ընդունի ֆողովը , ահա այս է ու բոշուելքը : »

ՄԵՐԵԿՄ ԳՈԽԼԻ Յ. էֆ. — 3 Ատենապետ եւ 3 Ատենադպիր մէկանց ընտրելու գժուարութիւնը սա կէտին մէջ կը կայանայ թէ միւնոյն անձը Ա. Բ. եւ Գ. Ատենապետ կամ Ատենադպիր ընտրուած ատեն եթէ մէկն համար քուէից տառելութիւնը չստանայ , կրնայ միւսէն զրկուիլ , իսկ թէ որ 3 Ատենա-

պետ եւ 3 Ատենադպիր զատ զատ ընտրուին , գարձեալ նոյն գժուարութիւնը տեղի պիտի ունենայ : Ուստի ամենէն լաւն է Ա. կարդի Ատենապետն ու Ատենադպիրը զատ , Բ. կարդինը զատ եւ Գ. կարդինը զատ ընտրել , 3 անդամ քուէարկութիւնն գործողութիւն կատարելով : Այսպէսով ընտրութիւնը թէ շուտ եւ թէ՝ զիւրութեամբ կը լմնայ :

Ատենապետ էֆ. տեսնելով որ նախընթաց բացատրութեանց վրայ խնդրոյն ամեն մութ կողմերը պարզուած են եւ ուրիշ դիտութիւն ընող մը չկայ , քուէի կը գնէ Դիւանի ընտրութեան եղանակը , եւ ընդհանուր հաւանութեամբ կորոշուի երեք քուէարկութեամբ կատարել դիւանի ընտրութիւնը , այն է նախ Ա. կարդի Ատենապետն ու Ատենադպիրն ընտրել , յետոյ Բ. եւ Գ. կարդինները հետզետէ :

Քուէարկութիւնն սկսելով քուէհամարի քննիչ կարգուեցան Դիւանին կողմէ :

Տ. Հմայեակ վարդապետ Դիմաքսեան  
Տ. Գրիգոր քահանայ Աճէմեան  
Ալթուն Տ/ւրբիւ էֆ.  
Մաղլումեան Յովոէփ էֆ.

Նախ՝ Ա. Ատենապետի եւ Ա. Ատենադըպիրի ընտրութեան քուէարկութիւնն ու քուէհամարը կատարուելով հետեւեալ արդիւնքն ունեցաւ .

Թիւ քուէարկուաց 58 : Տատեան Յարութիւն պէյ բացարձակ տառելութեամբ եւ 35 քուէով Ա. Ատենապետ ընտրուեցաւ :

Իսկ Ա. Ատենադպիրի համար բացարձակ տառելութիւն չգոյանալով , երկրորդ քուէարկութիւնն կատարուեցաւ առաւելագոյն քուէ ստացող Փափազեան եւ նուստիքեան էֆէնատիներուն վրայ , որոց առաջնը 27 եւ երկրորդը 22 քուէ ստացած էին , եւ Փափազեան Ստեփիան էֆ. 29 քուէով Ա. Ատենադպիր ընտրուեցաւ :

Երկրորդ՝ Բ. Ատենապետի եւ Բ. Ատենադպիրի ընտրութեան քուէարկութիւնն ու քուէհամարը կատարուելով հետեւեալ արդիւնքն ունեցաւ :

Թիւ քուէարկուաց 57 : Թէ՛ Բ. Ատենապետն առաջ առաւելութիւնը չստանայ , կրնայ միւսէն զրկուիլ , իսկ թէ որ 3 Ատենա-

դորդ քուէարկութիւն կատարուեցաւ առաւելագոյն քուէ ստացող հետեւեալ չորս ընտրելեաց վրայ .

Բ. Ատենապետի համար

Ստեփիան փաշա Ալղանեան քուէ 22  
Գրիգոր էֆ. Օտեան » 40

Բ. Ատենադպիրի համար

Պօղոս էֆ. Պառնասեան քուէ 24

Տիգրան » Եուսութեան » 8

Որոցմէ՝ Գրիգոր էֆ. Օտեան 29 քուէով Բ. Ատենապետ եւ Պօղոս էֆ. Պառնասեան 27 քուէով Բ. Ատենադպիր ընտրուեցան :

Երրորդ՝ Գ. Ատենապետի եւ Գ. Ատենադպիրի ընտրութեան քուէարկութիւնն ու քուէհամարը ընտրուեցան կորոշուի երեք քուէարկութեամբ կատարել դիւանի ընտրութիւնը հետեւեալ արդիւնքն ունեցաւ :

Թիւ քուէարկուաց 55 : Թէ՛ Գ. Ատենապետի եւ թէ Գ. Ատենադպիրի համար բացարձակ առաւելութիւն չգոյանալով՝ երկրորդ քուէարկութիւն կատարուեցաւ առաւելագոյն քուէ ստացող հետեւեալ արդիւնքն ունեցաւ :

Գ. Ատենապետի համար  
Թաղէս էֆ. Աղարէկեան քուէ 24  
Իուսինեան էֆ. » 47

Գ. Ատենադպիրի համար

Թաղէս էֆ. Պէկեան քուէ 47

Թաղէս » Թերիսան » 46

Որոցմէ՝ Սարդիս էֆ. Աղարէկեան 30 քուէով Գ. Ատենապետ ընտրուեցաւ , եւ Թաղէս էֆ. Թերիսան 29 քուէով Գ. Ատենադպիր ընտրուեցաւ :

Ատենապետ էֆ. Դիւանի ընտրութեան ամբողջ արդիւնքն ամփուլելով՝ կը ներկայացնէ Ժողովոյն , որ է

Յարութիւն Դ. պէյ Տատեան Ա. Ատենապետ Գրիգոր էֆ. Օտեան Բ. »

Սարդիս » Աղարէկեան Գ. »

Ատենապետ » Փափազեան Ա. Ատենադպիր Պօղոս » Պառնասեան Բ. »

Թաղէս » Թերիսան Գ. »

Եւ այն ընտրութիւնն ամբողջապէս կը վաւերացուի Ժողովոյն :

ԷՆՏՐՈՒԹԻՒՆ Ա.Զ.Դ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ՊՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Թէսւ կարդին Աղջային

կրօնական ժողովոյ ընտրութեան խնդրոյն եւ կած է , սակայն ըստ որում օրը տարաժաման ըլլալով կարեւի չէ սոյն ընտրութիւնն այսօր ՚ի յանդ հանել , ուստի Դիւանին կողմէն կառաջարկեմ որ Ա. Պատրիարքը Հայրն Եկեղեցական Համագումար ժողովով ընտրելեաց տակ աղջամար կարդի հաղորդէ երեսի վախճանաց , եւ իրենց քուէարկութիւնն ուղղէ նամակաւ յաջորդ նիստին համար :

Պէկեան Թ. էֆ. — Մեր քուէարկութիւնն արդէն պատրաստ է կրօնական ժողովոյ համար . կառաջարկեմ որ այսօր քուէարկութիւնը կատարուի եւ քուէարկութիւն կը պահպան պահուելով Ատենապետի համար ընտրուեցան :

Տ. ՄԱԹՔՈՍ Վ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Եթէ քուէարկութիւնն այսօր սկսուի , քուէհամարն ալ անմիջապէս ընկլու է , Պէկեան էֆ. ի ըսած կը ըստ ըլլալու :

Պէկեան Թ. էֆ. — Վարչութեան ժողովոյ ընտրութեան համար քուէարկութիւնն ընդհանուր ժողովով մէջ կը կատարուի , օրէնքն այսպէս կը արամադրէ , խակ քուէհամարն ուրիշ օր կը կրնայ ըլլալ :

Տ. ՄԱԹՔՈՍ Վ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — կրօնական ժողովոյ համար այդ պիտի տրամադրութիւն մը չկայ Աղջային օրինագրին մէջ .

Պէկեան Թ. էֆ. — Քաղաքական ժողովին համար ի նոյն է նաև եւ կրօնական ժողովին համար :

Ատենապետ էֆ. (կարդալով Անմանադրութեան մէջ կրօնական եւ Քաղաքական ժողովոյ ընտրութեանց արամադրութեանը վերաբերեալ 25 րդ եւ 37 րդ յօդուածները) կը պատասխանէ թէ կրօնական ժողովոյ համար բացորոշ տրամադրութիւն մը չըլլալուն , եւ 37 րդ այսինքն Քաղաքական ժողովոյ ընտրութեան միան , ընտրութեան ժողովոյ մէջ ըլլալը արամադրելուն , 25 րդ յօդուածը որ անկէ տառաջ է այս մասին բոլորովին լուսթիւն պահած ըլլալուն պատճառաւ կրնակը ըսել թէ օրէնտղին կամքը , միայն Քաղաքական ժողովոյ համար է , ապա թէ այս պարբերու-


Թիւնը փոխանակ 37 րդի , 25 րդ յօդուածին  
մէջ ըլլալու էր :

Թէ եւ Ատենապեա էֆ. փորձեց քուէի  
գնել Կրօնական ժողովոյ ընտրութեան քուէ-  
արկութիւնն այօրուընէ սկսելու ինդիրը , ոա-  
կայն երեսփոխանաց մնծ մասն արդէն մնկնած

ըլլալուն համար քուէարկութիւնն որոշ ար-  
դիւնք մը ցոյց չկրնալ տալով ինդիրը յաջորդ  
նիստին թողուեցաւ , եւ ատենաը վերցաւ  
ժամը  $10 \frac{1}{2}$  ին :

Ա. Գ. Ե. Կ. Ա. Հ. Ա. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

ՏԻԳՐԱՆ ԵՊԻՍՊՈՒԹԵԱՆ ՀՊՈՎԻՆԵԱՆ





## Գին 2 դուրսուշ

---

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏՈՒԿԻՆ

---

Կը ծախուի ՚ի Դիւանատան Պատրիարքարանի, և կըդանուի  
ամեն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկալները .